

Ա Ր Ա Ր Ա Տ

ԱՄՍԱԳԻՐ

ԿՐՕՆԱԿԱՆ, ՊԵՏԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ.

ԹԻԲԺ - ՇՐՋԱՆ Զ.

1873

ՏԱՐԻ Զ. - ՀԱՊՏԵՄԲԵՐ 31

ԿՐՕՆԱԿԱՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ-Բ Ի ՀԱՆԱԾԱՆՍ.

Միայն Աստուած է անսխալ :

Ինչպէս համայն մարդիկ՝ ընդ որս նա և կրօնից պաշտօնեայք՝ այս ինքն Ակեղեցականք իրրե մարդ՝ ենթակայ են մարդկային բնութեան յատկութեանց, որով չկարեն զէթ երբեմն սխալ և մեղադարտ գործերէ ազատ մնալ :

Թէպէտ Ակեղեցականք պարտաւոր են և նոցա նուիրական պաշտօններ կրահանջեն հեռու և զերծ սպրեղ սխալ և մեղադարտ ընթացներէ, սակայն ցորչափ նոքա ևս իբրե մարդ՝ մարդկային բնութեան յատուկ կիրքեր և զգացմունքներ ունին, իսպառ կարող չեն մարդկային բռնութեան յատկութեանց ազդեցութիւններէն ազատ կալ : Բայց և այնպէս նոցա մէջ դոյզն բացառութիւն տալով՝ մեծագոյն մասն յաւէտ ընտիր բարեմասնութիւններ ունի ըստ աստիճանի՝ ըստ պաշտաման և ըստ պարտուցն :

Թէպէտ Ակեղեցականք իւրեանց ունեցած բարձր և նուիրական դրից համաձայն պէտք է որ ըստ բարոյականին նա և մտաւորական բազմահմուտ զարգացած և լուսաւոր ընտիր ընտիր գաղափարներով զարդարուած կատարելութիւնք ունենան, մինչդեռ ամենուրեք ընդհանրապէս նոցա մեծագոյն մասն տգէտ և խաւարամած մտաց մէջ կխաբխափին, սակայն այս պակասութիւն ոչ այնքան նոցա՝ որքան ժողովրդեան և իւր ժամանակի հանգամանաց կրպատկանի :

Ակեղեցականք իւրեանց կրօնական գիրքերով յաւէտ մեծ ազդեցութիւն ունին ժողովրդեան վերայ, որով պէտք է որ զցայտ և զցերեկ միմիայն յօգուտ և ի պարծանս նոցա ջանան և զործեն, և նոցա համար ըստ ամենայնի անձնանուէր հանդիսանան, ինչպէս որ արժան է խոստովանիլ նա և՛ զի միշտ զուրկ չեն ժողովրդեան ի բարին և յօգտակարն առաջնորդելէ նոյնպիսի ազդեցութեամբ, և երբ բացառութեան տամք տեղ տեղ պատահած մասնաւոր զեղծումներն և վնասներն, ընդհանրապէս կրտես-

ներք՝ որ ժողովուրդն անիշխանութեանց մէջ անգամ եկեղեցականներով պատրաստուած՝ պաշտպանուած և միշտ միութարուած է:

Սակայն ի՞նչ է պտտճառ՝ որ շատ տեղեր բաւական ժամանակներէ ի վեր Ա-կեղեցականաց դէմ հակակիր ցոյցեր կը պարզուին, տրտունջներ և դառն բողոքներ կը յաճախեն, և մինչև անգամ կան մի քանի տեղեր՝ որ Ա-կեղեցականք հալածանաց ենթարկուած են:

Այսպիսի տրտունջներու՝ դառն բողոքներու և հալածանաց մէջ ժողովրդեան ամենաստուար մեծամասնութիւնն կամք՝ յօժարութիւն և զիտակցութիւն չունի, մինչև անգամ զժգոհ է յոյժ և յանհաբլինս սրտմտած ընդ դէմ հակառակորդաց: Աստի կհնաւի որ՝ սակաւութիւ կուսակցութիւնք կկազմուին՝ որք Ա-կեղեցականութիւնը հալածական վարել կերպին և զիշերաջան ծիգ չենային: Բայց ի՞նչ նպատակ ունին նոքա, որ այնքան յախուռն զրգուում զինուած են ընդդէմ Ա-կեղեցականաց:

Հարցուր հակառակորդաց, և ահա կուտակ կուտակ այնքան մեղապարտութիւնք կրեռնաւորեն Ա-կեղեցականաց վերայ, որ չգայթակղիլ անհնար է, մինչև անգամ զզուանք կզգան և կներգործեն: Ստոյգ են արդեօք: —

Նոյն իսկ հակառակորդք քաջ գիտեն իւրեանց հակառական ամբաստանութեանց և արանջանաց չասեմ բոլորին՝ զէթ մեծ մասին որ աստիճան չնչին կարեւորութիւն և ուշադրութեան արժանի նշանակութիւն ունենալն: Բայց զիտաւոր նպատակն ոչ թէ բարի նախանձախնդրու-

թենէ թերադրուած է, ոչ թէ ի զգաստութիւն՝ յուզողութիւն և ի զգուշութիւն Ա-կեղեցականաց ազգարարի է, վերջապէս՝ ոչ թէ Ա-կեղեցականաց զեղեցկակարգ բարեղարգութեան և արդիւնաւոր պայծառութեան համար հանրահռչակել է, այլ յաւիտ խառնաբաւելով և ժողովրդեան աչաց խառնաբաւել և զգուշել ներկայացուցանել, և նոյա արեւոյն-նիւն բուրդին անհեռացոյցանել է:

Այսան զի՝ եթէ նոցա միտքեր բարենդպատակ էին և իսկապէս խաւարամիտ և ուսումնազուրկ Ա-կեղեցականաց համար մինչ պարզ բողոք և տրտունջ կրառնային, միւս կողմանէ ևս պիտի անխոնջ ջանային ըստ սրահանջմանց ներկայ ժամանակիս բարեկիրթ՝ ուսեալ և լուսամիտ Ա-կեղեցականներ պատրաստել հասցնելոյ, քոյթ և եռանդ չպակասեցուցանելու, մինչդեռ յայսմ մասին ոմանք հակառակը ի տեղիս տեղիս կզործեն ի վնաս Ա-կեղեցւոյ և Ազգիս:

Արքան ցաւալի է, որ այս ինդիր ըստ մեզ վսեմ և անհրաժեշտ լինելով, ոմանք ի՞նչ օգուտ ունին և վարձ արդեօք կրեղունին՝ որ վատթար քան զթշնամին՝ կարծես ուխտած են այս նպատակի հասնելոյ համար՝ ամեն ջանք և ծիգ կը թափեն, և նոցա զիտաւոր նպատակ և պաշտօնն է և միշտ պիտի լինի Ա-կեղեցականութիւնը հալածան պահել, ճնշել և ոչնչացուցանել, որպէս զի նոցա ազգեցութիւնք կամ ծայրատուին և նուազին, և կամ իսպառ խաւանուին և ջնջուին*):

(*) Պէտք չէ զարմանալ, զի երբ Ա-կեղեցականաց դէմ այսպիսի հալածումն կայ, ինչու ապա-

Եւ իսպառ արդարացնելոց չեմ զԼեկեղեցականս, որոց մէջ կան անարժաններ և դաւաճաններ անգամ. սակայն երբ կը մտածեմք և յերեակայութիւն կը ներկայացնեմք մեր ազգի և Լեկեղեցւոյ ամենուրեքեան զրութիւնը և վիճակը, որոյ վերայ ամեն զգայուն և ջերմեռանդ Հայու յաւէտ սիրան կը ծնուի և հալ ու մաշ կը տոգորի, և արտասուօք կ'հառաչէ. . . . , և եթէ պէտք է և կըզձամք ի բարեկարգութիւն և ի պայծառութիւն շրջել Լեկեղեցականութիւնը, այսպէս կը վաշտի շարժել, այս ինքն վերջը վերօք բռնաբարելով՝ թէ դեղօք, չէ՞ որ Լեկեղեցականաց ոմանց համար ամբողջ Եկեղեցականութիւնը առանց բացառութեան հալածելով՝ մեր Ազգը և Լեկեղեցին կ'հալածուի և ի կորուստ կը գլորուի: Զ՞ որ ամենեքեան

քէն երբեմն ինչպէս և այժմ Լուսերականք և ազգութիւնք ոմանք՝ մինչդեռ մի կողմէն Հոգւմայի կրօնական մոլեռանդութիւնը հաւատարմութիւնը և երկպառակտիչ խռովայուզութիւնքը կ'ախարակեն և կ'ատապարտեն, միւս կողմէն՝ աշխարհէ աշխարհ թափառելով՝ շոյլ և ուժ պէտ դրամներ վատնելով՝ կարծես թէ նոր եկած մի քրիստոսէ ուսած՝ մի և նոյն՝ զուգէ և աւելի վատթար և խորամանկ ներգործութեամբք և միջոցներով՝ նոր քրիստոնէութիւն կը քարոզեն, բայց և այն՝ ոչ հիմանոսաց և անհաստից մէջ:

Մի խաբուիր, որ նոցա շատ հոգան էր և է այս ու այն ի քրիստոնէութիւն դարձուցանել, կամ նոցա հոգւոց փրկութեան համար կարեկցիլ, մանաւանդ ինքեանք չգիտեն՝ որ ոչ թէ Քրիստոնէից՝ այլ հիմանոսաց մէջ պիտի քարոզեն զՔրիստոս և Քրիստոնէական ճշմարտութիւնքը՝ ելէ ինչեանք արդարեւ քիչ իմանալէ և ուսած էն, և խաբուիւն ինչուն զՔրիստոս արդէն հիմանոսաց մէջ:

մի և նոյն մարմնոյ անդամք՝ համարիւն և համասեռ եղբարք՝ միմեանց անօգուտնախառնիք տալով և հռչակելով՝ զմիմեանս կ'հարուածեմք և կըսպանանեմք: Եթէ հալածեալ Լեկեղեցականքն անարժաններ և ազգայններ են, պէտք է մտածել՝ զի անկրթութիւնն և ազգի տութիւնն է նոցա գործակից և թելադրիչ, ուստի դարձեալ մեզն կտարածի համայն ազգի վերայ, որ ի ժամանակին օրինաւոր և բարեկարգ զբոսացներ և վարժարաններ չէ ունեցած, ուպէս զի ի նոցանէ արժանաւորներ՝ բարեբարոյներ և ուսումնականներ պատրաստուէին և առաւել զարդարէին և փառաւորէին մեր Լեկեղեցին և զժողովուրդն զարգացնէին. իսկ եթէ ունեցած է, այն ևս համեմատաբար յոյժ նուազ և սակաւութիւ լինելով, տակաւին Լեկեղեցւոյ և մեր Ազգի համար բազմութիւ արժանա-

Եւ պէտք է գիտնալ՝ զի սոցա (Քարոզչաց) մէջ կ'ոտնուին շահամոլ խաբեքաներ, և շատ մարդիկը կ'առան իւրեանց երկրորդութեամբ իւր թէ հիմանոսները միայն ի քրիստոնէութիւն կը համոզեն և կը յաջողին շրջել, ուստի դրամական մեծ նպաստներ կըստանան իւր թէ նորահաւատ հազարաւոր անձանց ոգորմութիւն տալու համար, սակայն պիտի նկատեմք՝ զի սոքա յաւէտ պաշտօնական պաշտպանութիւններ գտանելով, որոց քաջայայտ պէտք է լինին նոցա գործքեր, աներկբայի է, զի սոցա գլխաւոր և առաջին նպատակն քաղաքական է, այս ինքն կրօնական կերպարանքի տակ ծագեալ և պատրուակեալ՝ և իւր կրօն տարածելով՝ իւրեանց կառավարութեանց քաղաքական ազդեցութիւնքը աստ և անդ տարածել, և այս և այն ժողովրդեան և ազգի մէջ ակնածելի և սիրելի տպաւորել է:

Այս մի այնպիսի անտարակուսելի ճշմարտութիւն է, որում՝ կարծեմ՝ բազումք կը վկայեն:

ւոր՝ բարեկիրթ և ուսումնական եկեղեցականներ պատրաստած չէ:

Աւտի գիտնալով մեր Աշկեղեցականաց ինչպէս նաև ժողովրդեան պակասութիւնքը՝ պէտք է ջանամք գտնէ ներկայ մատուց սերունդէն սկսեալ և ապագայի համար օրինաւոր և բարեկարգ դպրոցներ և վարժարաններ ունենալ և նոցա մէջ ըստ արժանւոյն բանալ Հայոցերոյն մտքերը և մշակել և բեղմնաւորել ազգային դաստիարակութեամբ և լուսաւոր և վսեմ գաղափարներով:

Մեր գլխաւոր հաշածելիքն է ԿԵՆՏՐՈՆԻՆԵՐ. երբ կը յաջողիմք ազիտութեան յաղթել, յայնժամ դիւրին կը լինի եկեղեցականաց արժէք և նշանակութիւնը իմանալ և գգուել, որոց ազդեցութիւն և պատկառելի տալաւորութիւն մեր Ազգի համար նուիրական և գեղեցիկ ներգործութիւն միանգամայն անհրաժեշտ կարելւորութիւն ունի: —

Այս առթիւ պիտի յարակցեմ, զի մեր Աշկեղեցականութեան բարեկարգ վիճակը և Աշկեղեցւոյ պայծառութիւնը առաւել հիմնաւոր և ընդհանրատարած կողմերոյ և փութացներոյ համար՝ արժան է խորին ուշադրութիւն և ամենատեսակ աջակցութիւն տալ Մայր Աթոռոյն նորակառոյց Արդապետարան — Ճեմարանի, յորում ԱՆՀ. Հայրապետի բարենպաստականութիւն ձիւք և ջանքեր կեդրոնացած են Ազգիս յառաջագիտութեան և ապագայի համար, որպէս զի պայծառ փայլին և փառաւորութիւն Հայութիւն և Հայաստանեայց Աշկեղեցին՝ ինչպէս նաև Աշկեղեցականք: —

ՎԱՀՐԱՄ ՎԱՐԳԱՊԵՏ ՄԱՆԿՈՒՆԻ.

ՊԱՏՄԱԿԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ԴԵՆՈՒՄԵՆԵՅ ԷՐԵՒԵԼԻ ՎԱՆՕՐԷԵՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ
ՆԱՀԱՆՔԷՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅ Ե ԸՆԴՀԱՆՈՒՍ

Ս. ԼԵՂԻԱՃԻ:

Ա.Տ. ՏԵՐԱՆ.

Արարատեան կաթուղիէ Մայր Եկեղեցի	
Ս. Էջմիածին յԱրագածոտն գաւառի ի Վաղարշապատ շինեալ ի Տրդատոյ արքայէ	305
Նորոգեալ ի Վահանայ Մամիկոնեան	483
Եւ ի Վաթիոսա կաթուղիկոսէ	618
Ամաղուայ նորավանք Ս. Նախավկայի ի Վայոց ձոր՝ ի Ստեփաննոս Եպիսկոպոսէ Սիւնեաց	936
Ամենափրկիչ Հին Ջուղայոս յԵրնջակ գաւառի ի Պ. Վահրամայ	1271
Այլի վանք Ս. Գեղարդոյ ի Գառնի ի Ս. Սահակ Պարթևէ, իսկ փորուածոյ Եկեղեցիքն ի Պոռ իշխանէ	1288
Անբերդոյ սուրբ Աստուածածին յԱրագած լեռնի ի Վաչէ իշխանէ Հոյոց	1210
Անոյ կաթուղիէ Եկեղեցի ի Սմբատ արքայէ և ի Սողոմոնէ թագուհոյն Գագկայ	1001
Աշտարակոյ Ս. Մարիանէ կուսի վանք յԱրագածոտն ի Յակոբայ Երիցուէ	1310
Աստապատայ Ս. Վարդանայ վանք ի Նախիջևանայ գաւառին, նորոգեալ ի Խոջայ Սաֆարէ	1655
Աստապատայ կարմիր վանք սրբոյն Ստեփաննոսի	977
Աստուածընկալ սուր նշան ի Նիկ գաւառի ի Բուրդ իշխանէ	1244
Արամիւնայ Ս. Յակոբ ի Սոտայց գաւառի յԱ. Դաւիթ կաթուղիկոսէ	731
Արցինայի վանք ի Շիրակ գաւառի յԱ. Խաչիկ կաթուղիկոսէ	972